չարժեցին Կոբերի վրայով»։ Նա խնդրում է կարգադրություն անել։ Կառավարությունը որոշեց չընդունել վերջնագիրը, չյանձնել Շահալի կայարանը և զինված ուժի դիմելու պարագային՝ ցույց տալ դիմադրություն։

Ստացանք Դիլիջանից ևս երեք հեռագիր. առաջին, որ մերոնք գրաւել են Կոբերը, երկրորդ, որ պարպել են Կոբերը գերմանացի լէյտենանտի պահանջով և երրորդ, որ մերոնք նորէն եկել են Կոբեր։ Մեր կառավարությունը Թիֆլիս ուղարկեց մի հեռագիր Ժորդանիային, որով առաջարկում է զինված ընդհարում չառաջացնել, այլ աշխատել ընդհարումը լուծել խաղաղ ճանապարհով։

Ջամալեանից ստացանք երկու ռադիո-հեռագիր. առաջինով յայտնում է, որ ինքը յուշագիր է ստացել՝ դատարկելու Թիֆլիսի նահանգի այն մասը, որ թողնում են թիւրքական զօրքերը. երկրորդով, որ նա տեսակցել է վրաց արտաքին գործոց նախարարի հետ ու վերջինս առաջարկել է թողնել գրաւած շրջանները և ապա բանակցութիւններ սկսել հարցը խաղաղութեամբ վերջացնելու համար. կառավարությունը կանգնած է այն տեսակէտի վրա, որ հարցը պէտք է լուծել խաղաղ ճանապարհով և պահել բարի-դրացիական յարաբերությունները»։

Այս արտակարգ յայտարարությունից յետոյ ընդմիջում արաւ, որի միջոցին ստացաւ մի նոր հեռագիր, թէ՝ հայկական զօրամասերը բռնել են թիւրքերի թողած ամբողջ շրջանը և որ դրութիւնը հանդիստ է։ Միջնադարին ֆրակցիաները ունեցան խորհրդակցութիւններ, և երբ նիստը վերսկսուաց, ամենքի որոշումն արդէն պատրաստ էր։

Կառավարության յայտարարության առթիւ արտայայտուեցին բազմաթիւ պատգամաւորներ, որոնք բոլորն էլ շեշտում էին միջադէպը խաղաղ ձևերով հարթելու անհրաժեշտությունը, բայց եթէ վրացիները դիմեն զինուած ուժի, անհրաժեշտ էր ցույց տալ դիմադրություն։ Ի վերջոյ, ընդունուեց հետևեալ բանաձևը. «Լսելով կառավարության յայտարարությունը՝ Հայաստանի Խորհուրդը հաւանություն է տալիս կառավարության բռնած քաղաքականության ու արած քայլերին և առաջարկում է նոյն ուղղությամբ շարունակել»։

Ստանալով Հայ.Խորհրդի հաւանությունը՝ Յ.Քալանդունին հեռագրեց Թիֆլիս, Ա. Ջամալեանին, թէ՝ «Հայաստանի Խորհուրդը լսելով իմ զեկուցումը վրացական № 4303 դիմումի և Շահալին պարպելու մասին արուած վերջնագիր-պահանջի, այլ և կառավարության ձեռք առած միջոցների մասին՝ որոշեց 1) հաւանություն տալ կառավարության գործողություններին և առաջարկեց նրան յետագայում էլ հետևել ընդունած ուղղության. 2) պարտք դնել կառավարության վրա՝ ամէն ջանք թափել բախումը խաղաղ ճանապարհով լուծելու համար՝ ա՛յն յոյսով, որ Վրաստանն էլ յետ կը կենայ յարձակողական քայլերից և չի անցնի իր գրաւած գիծը։ Խնդրեմ հաղորդել այդ մասին վրաց կառավարության»։

Մի ուրիշ հեռագիր էլ տուաց Ժորդանիային, պատճէնը՝ Ջամալեանին. «Դիլիջանի զօրամասի պետը հաղորդում է, որ վրաց հրամանատարությունը վերջնագիր է ներկայացրել՝ դատարկելու Շահալի կայարանը։ Ես հրաման տուի՝ չդատարկել կայարանը, և եթէ վրացիները անցնեն յարձակման — պաշտպանուել։ Ի խուսափումն բարդությունների, որոնք կարող են առաջ բերել նոր աղէտներ, յանուն պատերազմից տառապած ու յոչնչուած Վրաստանի և Հայաստանի բարիքի, յանուն իրաւունքի և արդարության